Հայոց եկեղեցու պատմություն
Թեմատիկ թեստային աշխատանք
VI դասարան (I կիսամյակ)

Ա/Ա _____

1. Լրացրու՛ բաց թողած բառերը.

ա) Քրիստոնեական եկեղեցու հիմնադրումը սկիզբ է առնում _____:

բ) Քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն ընդունվել է _____ թվականին:

գ) Կուսակրոնություն ընդունած քահանային անվանում են _____ :

դ) Մկրտությունն ու դրոշմը միասին կոչվում են _____ :

2. Ինչպե՞ս է կոչվում կուսակրոն հոգևորականների, վանականների համար նախատեսված եկեղեցի-բնակավայրը, որի մեջ մտնում են նաև կացարաններ, կրթական, տնտեսական այլ շինություններ:

_____

3. Ե՞րբ է տեղի ունեցել քրիստոնեական եկեղեցու առաջին մեծ բաժանումը:

ա) 381թ. բ) 1054թ. գ) 451թ.

4. Գրի՛ր քրիստոնեական եկեղեցու երկրորդ մեծ բաժանման տարեթիվը՝ _____

5. Լրացրու՛ բաց թողած բառը:

Քրիստոնեական եկեղեցու II բաժանումից հետո բյուզանդական եկեղեցին և նրա կողմնակիցներն իրենց անվանեցին _____ եկեղեցի:

6. Ի՞նչ է նշանակում պատրիարք՝ _____

7. Նշի՛ր սխալ պնդումը:

ա) Կաթոլիկ եկեղեցին իր անունը ստացել է լատիներեն կաթոլիկ բառից, որը նշանակում է տիեզերական, ընդհանուր:

բ) Կաթոլիկ եկեղեցիների հոգևոր և վարչական գերագույն առաջնորդը Համայն Ռուսիայի պատրիարքն է:

գ) Կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները կոչվում են կարդինալներ:

8. Գրի՛ր այն բառը, որի բացատրությունը բերված է ստորև:

Եկեղեցում օրվա տարբեր ժամերին կատարվող աղոթքի արարողություն - _____

9. Գրի՛ր քրիստոնեական եկեղեցու հիմնական ուղղությունները.

ա) _____ բ) _____

գ) _____ դ) _____

10. Լրացրու՛ բաց թողած բառը:

Հոգևոր աստիճանների ամբողջական համակարգը կոչվում է _____ :

11. Նվիրապետական քանի՞ աստիճան կա այսօր հայոց եկեղեցում՝ _____

12. Ո՞վ է Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր բարձրագույն պաշտոնյան՝ _____

13. Վերհիշի՛ր և գրի՛ր երեք փաստ.

ա) Ո՞վ է ներկայիս Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ _____

բ) Ո՞ր թվականին է նա ընտրվել՝ _____

գ) Մեր եկեղեցու ո՞րերորդ կաթողիկոսն է՝ _____

14. Համապատասխանեցրու՛ բառերը և բացատրությունները.

1. Պատարագ	ա) հաղորդության հաց՝ կլոր, վրան խաչի պատկերով	1	
2. Մյուռոն	բ) Կարմիր և սպիտակ գույնի թելերի հյուսվածք	2	
3. Թեմ	գ) եկեղեցում որոշակի կանոնով կատարվող արարողություն	3	
4. Նարոտ	դ) ուսուցիչ	4	
5. Բաղարջ	ե) վերատեսուչ	5	
6. Նշխար	զ) քրիստոնեական եկեղեցու անդամ	6	
7. Ծես	է) անուշաբույր հեղուկ	7	
8. Հավատացյալ	ը) առանց թթխմորի պատրաստված հաց	8	
9. Վարդապետ	թ) եկեղեցու տարածքային վարչական միավոր	9	
10. Եպիսկոպոս	ժ) եկեղեցու արարողություն. հաղորդության խորհրդի առանցք	10	

15. Ներկայացված քաղաքներից ու տարեթվերից գտի՛ր միմյանց համապատասխանողը:

1. 325թ.	ա)Կոստանդնուպոլիս	1	
2. 381թ.	բ) Նիկեա	2	
3. 431թ.	գ) Եփեսոս	3	

16. Ամբողջացրու՛ նախադասությունը:

Եպիսկոպոս բառացի նշանակում է _____ :

17. Ո՞րն է նվիրապետական ամենաբարձր աստճանը՝ _____

18. Քանի՞ խորհուրդ ունի հայոց եկեղեցին՝ _____ :

19. Թվարկի՛ր հայոց եկեղեցու խորհուրդները:

_____

_____

20. 1. Ատյանի ո՞ր կողմում է գտնվում մկրտության ավազանը՝ _____:

2. Եկեղեցու ո՞ր մասում է գտնվում ատյանը՝ _____ :

3. Ո՞ր քայլերից հետո է մարդը թողության արժանանում, այսինքն՝ ներվում են նրա մեղքերը:

_____

____/_____/____

_____ միավոր